«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	*ԼԵԶՎԱԿԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ*
ԱՌԱՐԿԱ	մայրենի
ՀԵՂԻՆԱԿ	Հեղինե Մաթևոսյան
ՄԱՐԶ	Լոռի
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Ստեփանավանի 6-րդ միջնակարգ դպրոց
ՂԵԿԱՎԱՐ	Մ.գ.դ., դոցենտ, ՌԲԱ պրոֆեսոր՝ Ա. Ծատուրյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ _____ 2

ԼԵԶՎԱԿԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ _____ 6

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ _____ 16

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ _____ 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցնարվեստանոցէ, որտեղձևավորվումէաճողսերնդիմիտքը:
Հարկավորէայնամուրպահել, եթեչեսցանկանումձեռքիցդբացթողնելապագան:

Ա. Բարբյուս

Դպրոցը,առավելապեսպահպանողականկառույց լինելով հանդերձ,մշտապեսփորձում է կողմնորոշվելդեպիաշակերտը: Անշուշտ, սա այնքան էլ հեշտ հաղթահարելի խնդիր չէ: Պետքէկարողանալուսումնականգործընթացըկազմակերպելայնպես, որբացահայտվենյուրաքանչյուրաշակերտիանհատականառանձնահատկությունները, որնրահամարսովորելըդառնաանհատականպատասխանատվությանգիտակցում, ինքնուրույնլինելը՝վարքագծիբնականոնդրսևորում: Այս համատեքստում, հատկապես կարևորվում է մայրենիի ուսուցումը, քանի որ այն հիմնական լեզուն է և ամենուր ու անընդհատ է, առկա է գործունեության բոլոր դրսևորումներում: Իսկ ուսումնական միջավայրը պիտի նպաստի, որ սովորողնառանցսխալվելուվախիարտահայտիիրմտքերը, կարծիքը, հույզերը:Ժամանակակիցաշխարհիսոցիալ - տնտեսական, քաղաքական, մշակութայինհարաբերություններիկառուցմանայսփուլումկարևորէոչմիայնճանաչողական զարգացածկարողություններովօժտված, այլևարդյունավետհաղորդակցվող, համագործակցայինբավարարիմտություններունեցողքաղաքացիներիդաստիարակումը, ինչրկրթականհամակարգիցպահանջումէձևավորելինքնուրույնսովորելու, ստեղծագործաբարմտածելուևամենատարբերիրավիճակներումխնդիրներինարդյունավետլ

ուծումներառաջարկելուկարողություններով, ողջկյանքիընթացքումսովորելուցանկությամբևպատրաստակամությամբօժտվածսովորողների:

Մեր օրերում անառարկելի փաստ է, որ տարրական դպրոցը միայն գիտելիքների ձեռքբերման օղակ չէ: ՈՒսուցման այս փուլում գիտելիքը դիտարկվում է որպես անձի զարգացման միջոց: Ասել է, թե՝ տարրական դպրոցում կարևորում ենք ոչ թե գիտելիքների մեծ ծավալի հաղորդումը, այլև՝ այդ գիտելիքների երեխաների կողմից յուրացման ձևերը, գործածականությունը, երեխաների բարձրակարգ մտածողության ձևավորման համար պիտանի լինելը[2, էջ 5]:

Հետազոտությանպատակը՝բացահայտելդպրոցիխնդիրներըտարրականդասարաններիմայրենիիուսուցմանգործընթացում: Հանրակրթականդպրոցըպիտիձևավորիամբողջական, լիարժեքնկարագիրունեցողմարդու, որըցանկացածբնագավառումիրենկդրսևորիորպեսգրագետ, ստեղծագործող, կենսականկամուսումնականխնդիրներլուծելուունականձնավորություն: Այսիմաստով՝քաղաքացիականկրթության, հասարակությանկրթվածությանբարձրվարկանիշներցմեկըդարձելէայնունակություններիձևավորումը, ինչն ապահովվումէքերականականգիտելիքների, կարողություններիևհմտություններիձեռքբերմանգործընթացում:

Հետազոտությանառարկան տարրականդասարաններումմայրենիիուսուցմանգործընթացն է՝ նոր մեթոդական համակարգով:

Հետազոտությանխնդիրներնեն՝

- ուսումնասիրելտարրականդպրոցումլեզվական-քերականականգիտելիքներիուսուցմանպատմականփորձը, գործադրվածմեթոդները,
- ուսումնասիրելկրտսերդպրոցականներիբառապաշարիշերտերը, որոշելնրանցխոսքումձևաբանականգիտելիքներիկիրառմանմակարդակները,
- հիմնավորելընթերցանությանյութերիմիջոցովձևաբանականգիտելիքների՝ գործնականճանապարհովուսումնասիրմանարդյունավետությունըմտահաղորդակցականկարողություններիզարգացմանառումով:

Մայրենի լեզվի տարրական դասընթացը բաժանվում է երկու մասի, որոնցիցառաջինը ներառում է ընթերցանությունը, իսկ երկրորդը՝ լեզվական տարրական գիտելիքները,որոնք մեկը մյուսի վրա հենվելով, ընդհանուր առմամբ լուծում են երեխայի խոսքի զարգացման կարևոր խնդիրը [6, էջ 22]:

Հայտնի է, որ տարրական դպրոցում լեզվական տարրական գիտելիքների ուսուցումը գործնական բնույթ է կրում, իհարկե, հաշվի առնելով առարկայական առանձնահատկությունները, այսինքն՝ երբեմն էլ այս կամ այն լեզվական իրողության վերաբերյալ մատչելի տեսական գիտելիքներ ենք հաղորդում[3, էջ 20]:



Մայրենի լեզվի ուսումնասիրությունը տարրական դասարաններում մի քանի կարևոր նպատակներ է հետապնդում. կրտսեր դպրոցականների

- բառապաշարի հարստացում նորանոր բառերով,
- ունեցած բառային ֆոնդի մաքրում,
- խոսքի հղկում,զարգացում,

- արտահայտելիք մտքերին համարժեք և համապատասխան բառեր ընտրելու, դրանք ուղղախոսության կանոններին համապատասխան արտաբերելու կարողության մշակում,
- հայերեն ուղղագրությանը համապատասխան գրելու, բանավոր և գրավոր կապակցված խոսք կառուցելու կարողության մշակում:

Իսկ այս ամենն իրականություն դարձնելու համար անհրաժեշտ են աշակերտների քերականական, լեզվական գիտելիքների իմացությունը և դրանք խոսքի մեջ օգտագործելու համար կարևոր ունակությունները: Լեզվական-քերականական գիտելիքների յուրացումը նպաստում է աշակերտների ճանաչողական կարողությունների, տրամաբանական մտածողության և լեզվամտածողության զարգացմանը: Լեզվական իրողությունների յուրացման ընթացքում երեխաները իրականացնում են վերլուծական և համադրական տրամաբանական գործողություններ, գտնում են լեզվական երևույթների միջև գոյություն ունեցող տարբերություններն ու ընդհանրությունները, դատողություններ են անում, փորձում են ընկալել վերացական բազմաթիվ երևույթներ: Այս ամենով հանդերձ, բնականաբար, զարգանում է երեխաների մտածողությունը: Իսկ մեր խնդիրն է լեզվական գիտելիքների ուսուցումը կազմակերպել այնպես, որ ուսումնասիրվող նյութն աշակերտներն իսկապես հասկանան և կիրառեն իրենց խոսքի մեջ[4, էջ52]:

Պետք է այնպես անել, որ ուսուցանվող նյութը լինի հետաքրքրաշարժ, որպեսզի այն զարգացնի աշակերտների ինքնուրույնությունը, ստեղծագործական միտքը և երևակայությունը, այնպես ուսուցանել, որպեսզի բարձրանա աշակերտների ակտիվությունը:

Ինչպես ժամանակակից մանկավարժ - հոգեբաններն են ապացուցում, աշակերտի կողմից մտավոր խնդիր-առաջադրանքների կատարման ընթացքում սեփական աշխատանքով ձեռք բերվող գիտելիքը երբեք չի մոռացվում: Այս դեպքում աշակերտը կատարում է դիտարկումներ, փորձեր, եզրահանգումներ և ստացված գիտելիքները դառնում են նրա սեփականությունը, վերածվում են համոզմունքների[2, էջ 205]:

ԼԵԶՎԱԿԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Լեզվական գիտելիքների գիտակցական ընկալումն ապահովող կարևոր պայման է հանդիսանում քերականության ուսուցման մանկավարժական սկզբունքների հաշվառումը:

Տարրական դասարաններում լեզվական տարրական գիտելիքները ուսուցանվում են ոչ թե գիտական սահմանումներն անգիր անելով, սերտելով, այլ՝ գործնական վարժությունների կատարման ճանապարհով: Կարևոր է նաև այն, որ ձեռք բերած լեզվական գիտելիքները, ունակությունները աշակերտները կարողանան կիրառել խոսքային թե՛ գրավոր, թե՛ բանավոր գործունեության մեջ, ընդ որում այդ անեն ճիշտ և գիտակցված

[1, էջ 46]:

Ըստ հանրակրթության պետական չափորոշչի և առարկայական չափորոշիչների պահանջների տարրական դասարանների ծրագրային նյութը տրվում է պարուրաձև սկզբունքով, որն ապահովում է անընդհատ անդրադարձ անցածին, այն է՝ ծանոթ կամ ունեցած գիտելիքների կրկնման, ամրակայման հիմքի վրա նոր գիտելիքների ձեռքբերումը:

Լեզվական գիտելիքներն ուսուցանելիս լայնորեն կիրառվում են մտածողության գործունեությունն ակտիվացնող հնարներ՝ վերլուծություն, համադրություն, համեմատություն, դասակարգում, հակադրում, ապացույցներ, հիմնավորումներ[1,էջ47]:

Յուրաքանչյուր լեզվական իրողություն բխեցվում է աշակերտներին ծանոթ նյութից, իսկ ուսումնասիրված նյութն ամրակայվում է բազմաթիվ ու բազմազան վարժություններով, որոնք սակայն միևնույն նպատակն են հետապնդում:

Կարևոր հանգամանք է, նաև այն, որ ինչպես ցանկացած ուսումնական նյութի, այդպես էլ (և հատկապես) լեզվական գիտելիքների ուսուցանման ընթացքում միշտ հաշվի է առնվում դասարանի աշակերտների գիտելիքների և կարողությունների տարամակարդակ լինելու փաստը:

Անհատական և տարբերակված մոտեցումն իրականացվում է թե՛ համադասարանային, թե՛ խմբային աշխատանքների միջոցով:

Լեզվական-քերականական հասկացությունները տարրական օղակում վերացական են և ըստ այդմ բավական բարդ է այդ նյութն ուսուցանելը, քանի որ կրտսեր դպրոցականների վերացական մտածողությունը լրիվ զարգացած չէ: Երեխաները քերականության ուսումնասիրության ընթացքում գործ են ունենում ոչ թե զննական առարկաների, այլ լեզվական անտեսանելի երևույթների հետ, որոնք արագ մոռացվում են: Այդ է պատճառը, որ կա գիտելիքների հաղորդման խիստ հաջորդականություն, տարվում է հարցերի աստիճանական բարդացում և հատկապես, վարժությունների միջոցով, անընդհատ կրկնություն:



Տարրական դասարաններում լեզվաքերականական գիտելիքների ձեռքբերման գործընթացում երեխաները սովորում են՝

- ✓ առանձնացնել բառի մեջ եղած հնչույթները
- ✓ ընկալել բառի ձևաբանական կառույցը
- ✓ ընկալել բառի կազմությունը /արմատ, ածանց, վերջավորություն/
- ✓ գիտակցել բառը որպես ինքնուրույն խոսքային միավոր

Լեզվական տարրական գիտելիքների խորությամբ յուրացնելու համար իրականացվող կրկնությունները պետք է կայուն կապեր ստեղծեն անցածի, յուրացրածի հետ, ինչպես նաև, երեխաները դրանք պետք է կիրառեն խոսքի մեջ:

Լեզվական տարրական գիտելիքներ ուսուցանելիս իրականացվում է այն պարզ ու մատչելի լեզվական հասկացությունների յուրացումը, որոնք անհրաժեշտ են երեխաներին՝ բանավոր և գրավոր գրագետ խոսք կառուցելու կարողության ձևավորման, լեզվամտածողության զարգացման համար: Լեզվական հասկացությունները ուսումնասիրվում են պարզից դեպի բարդ, ծանոթ նյութից դեպի անծանոթը, հեշտից դեպի դժվարը տանող ուղով, մեկնաբանություններն արվում են գիտականորեն ճիշտ, բայց մատչելի ու պարզ[2, էջ 205]:

Լեզվական տարրական գիտելիքների ուսուցման ընթացքում երեխաները

- ձեռք են բերում գիտելիքներ բառակազմությունից, ձևաբանությունից, շարահյուսությունից, իսկ դրանց հիման վրա՝ ուղղագրական որոշակի կարողություններ և հմտություններ,
- զարգացնում են բառապաշարը՝ շրջակա աշխարհը և նրանում առկա տարատեսակ փոխհարաբերություններ ներկայացնող բանավոր և գրավոր խոսք կառուցելու համար,
- սովորում են բանավոր և գրավոր խոսքում օգտագործել պարզ և բարդ նախադասություններ, դրսևորում են մտահաղորդակցական կարողություններ և քննադատական մտածողություն:

Ձեռք բերված լեզվական գիտելիքները կապակցված խոսքում օգտագործելու ուղղությամբ մեծ աշխատանք է տարվում: Կարևորում ենք, օրինակ՝ նկարի շուրջ պատմություն հյուսելը, տեսած-լսածը ներկայացնելը, ընթերցած ստեղծագործությունը վերապատմելը և այլն: [1,էջ 73]

Լեզվական գիտելիքների խոսքի մեջ գիտակցորեն և ճիշտ կիրառելու համար կատարվում են շարունակական և նպատակային վարժություններ: Լեզվական վարժությունների անցկացման գործընթացը պետք է բավարարի մի շարք դիդակտիկական պահանջների.

- Միևնույն լեզվական իրողության յուրացման նպատակով պետք է կազմակերպել բազմաթիվ և տարատեսակ առաջադրանքներ՝ ուսումնասիրվող դասանյութի շուրջ:
- Առաջադրանքների կատարումը կրելու է շարունակական և համակարգված բնույթ:
- Յուրաքանչյուր վարժություն հիմք է նախապատրաստում հաջորդ վարժության կատարման համար:
- Վարժությունների պահանջները կարդում են աշակերտները, ապա բացատրում, պլանավորում կատարման քայլերը:
- Կարևորվում է աշակերտների ինքնուրույն գործունեությունը[6, էջ 25]:

Լեզվական-քերականական վարժությունները, ըստ նպատակադրման, լինում են՝

1. Նախապատրաստական: Երեխաները նախապատրաստվում են լեզվական նյութի ուսումնասիրմանը:Այս վարժությունները նախ կատարում ենք գրատախտակին՝ ապահովելով յուրաքանչյուր աշակերտի մասնակցությունը:
2. Մարզողական: Սրանք իրենց մտքերն արտահայտելու,պահանջվող լեզվական բաղադրիչն ընտրելու, ընդգծելու,ամբողջացնելու և նման այլ հանձնարարականներ պարունակող վարժություններն են, որոնք նպաստում են երեխաների նոր սովորած գիտելիքների ճիշտ և վարժ կիրառմանը:
3. Վերլուծական: Սրանց միջոցով աշակերտները վերլուծում են իրենց ձեռք բերած գիտելիքները, արդեն յուրացրած և նոր գիտելիքների միջև կապեր են գտնում:
4. Կիրառական: Այս վարժությունները ինքնաստուգման, ձեռք բերած գիտելիքների բանավոր կամ գրավոր խոսքում նույնությամբ կամ ստեղծագործաբար կիրառելու հրաշալի վարժանք են:
5. Ստեղծագործական: Յուրացված լեզվական իրողություններն ու հասկացությունները կիրառվում են ստեղծագործաբար՝ ողջ աշխատանքը կատարելով ինքնուրույն:
6. Հնչյունային: Կատարվում են, երբ հնչյուններն ուսումնասիրվում են որպես լեզվական հասկացություն, բացատրվում են բառերի ուղղագրությունն ու ուղղախոսությունը:
7. Բառակազմական: Սրանց միջոցով ուսուցանվում են բառի կազմության վերաբերյալ գիտելիքներ:
8. Ձևաբանական: Աշակերտները բնութագրում են առաջադրված նախադասության մեջ օգտագործված բառերը՝ իրենց առանձնահատկություններով[6, էջ 26]:

Լեզվական գիտելիքների տարրական ուսուցման գործում կարևոր տեղ ունեն նաև լեզվական խաղ-վարժությունները: Խաղերը էապես նպաստում են ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը: Խաղային վարժությունների միջոցով լեզվական գիտելիքները վերածվում են կարողությունների և զարգացնում են աշակերտների տրամաբանական մտածողությունն ու ստեղծագործական կարողությունները: Խաղերը դասանյութի յուրացումը դարձնում են հետաքրքրաշարժ և գրավիչ[5, էջ 12]:



ինքնաշեն նկար-քարտեր

Լեզվականտարրականգիտելիքներիուսուցումըկրտսերդասարաններումիրականացվումէվերլուծական-համադրականմեթոդով՝ իրամենալայնուբազմապիսիդրսևորումներով[1, էջ 60] :Այսինքն՝ լեզվականտարբերթեմաներիուսուցմանժամանակվերենքլուծումլեզվիմեջեղածբազմաթիվուտարաբնույթերևույթները, դրանցառանձնահատկությունները, բացահայտումենքբառի, նրակազմության, կրածփոփոխություններիօրինաչափությունները, նախադասությանմեջևխոսքումունեցածդերը, ապաամփոփում, համակարգումենքկատարածդիտարկումները:

Վերլուծական-համադրական մեթոդը լեզվական տարրական գիտելիքների ուսումնասիրման գործընթացում կիրառվում է՝ նպաստելով աշակերտների մտածողական ակտիվության բարձրացմանը[2, էջ 205]: Աշակերտները լեզվական նյութը չեն ընկալում մեխանիկորեն, այլ տարաբնույթ տրամաբանական-մտածողական գործունեության ճանապարհով: Լեզվական նոր գիտելիքներ ձեռք բերելիս աշակերտը վերլուծություն է կատարում, համեմատում է ուսումնասիրվող երևույթների և առարկաների ու գործողությունների անվանումները, դրանցում ընդհանրություններ ու տարբերություններ է գտնում և որոշակի եզրահանգումներ է կատարում: Ակտիվանում է երեխաների մտածողությունը, տրվում է այս կամ այն լեզվական երևույթի սահմանումը: Աշակերտը անցնում է մասնավորից դեպի ընդհանուր՝ ինդուկտիվ ուղի, այնուհետև ճանաչողությունը շարունակվում է ետդարձի՝ ընդհանուրից դեպի մասնավոր փաստերը գնացող ճանապարհով՝ դեդուկցիայով:

Այսինքն՝ ճանաչողության՝ ակտիվ ստեղծագործական - որոնողական գործունեություն ծավալելիս աշակերտը կատարում է մտահանգումներ, եզրակացություն և մասնավորեցում, վերլուծություն և համադրություն:

Լեզվական տարրական գիտելիքների գիտակցական յուրացման համար հարկավոր է, որ երեխաները լեզվական տվյալ հասկացության մասին բավականաչափ օրինակներ ու փաստեր հավաքեն, որպեսզի կարողանան ինքնուրույն ձևակերպել սահմանումը[2, էջ 206]:

Դեռևս գրաճանաչության շրջանից սկսած ուսումնասիրում ենք հնչյունաբանությունը, քանի որ հնչյունաբանական գիտելիքների ու կարողությունների հիման վրա ձևավորվում են կարդալու և գրելու կարողությունները, ուղղագրական և ուղղախոսական ունակությունները, բառը խոսքի մեջ հասկանալով օգտագործելու կարողությունը և այլն: Այս շրջանում լեզվական տարրական գիտելիքներն ուսուցանում ենք պատմություն — նախադասություն — բառ — վանկ — հնչյուն — տառ, իսկ գրաճանաչության փուլի ավարտից հետո՝ հակադարձ հաջորդականությամբ:

Բառերն իրենց լրիվ հնչյունակազմով ճիշտ արտասանելու կարողության զարգացման, ճիշտ տառակազմով գրելու ունակության ձևավորման, բառերը վանկերի բաժանելու, գաղտնավանկի ը-ն ճիշտ գործածելու հմտության մշակման նպատակով տարվում են աշխատանքներ՝ հնչյունի և նրա տառի ուսուցման ուղղությամբ՝ կատարելով հնչյունային լսողության զարգացման և բառի վանկային վերլուծության վարժություններ:





Հնչյունի և տառի մասին տրվող գաղափարը, որքան էլ մատչելի ու պարզ, ամեն դեպքում պետք է լինի գիտական: Երեխաներն իմանում են, որ խոսքը կազմված է հնչյուններից, որոնք լինում են ձայնավոր և բաղաձայն և, որ այդ դասակարգման համար հիմք են հանդիսանում նրանց մի քանի առանձնահատկությունները: Ինչպես օրինակ՝ արտասանության եղանակը, հնչման բնույթը, վանկ կազմելու հնարավորությունը: Բացի այդ երեխաները գործնականորեն տարբերում են հայերենի վեց ձայնավոր հնչյունները և դրանց ութ տառերը:

Վանկի մասին գաղափար տալիս, այն չենք սահմանում: Ուղղակի երեխաներին սովորեցնում ենք բառերը բաժանել վանկերի, ինչի ընթացքում նրանք նկատում են, որ բառն ունի այնքան վանկ, որքան ձայնավոր: Բառերը վանկատելը, տողադարձ անելը շատ կարևոր հմտություն է, ուստի այն ամրակայելու շուրջ պարբերաբար բազմաթիվ վարժություններ ենք կատարում:

Բառի մասին ևս երեխաները նախնական պատկերացում ստանում են գրաճանաչության շրջանից, ծանոթանում են միավանկ, բազմավանկ բառերին:



Այնուհետև բազում գործնական վարժությունների ճանապարհով, գաղափար են կազմում այն մասին, որ իրենց ծանոթ բառերից յուրաքանչյուրն ինչ-որ իմաստ ունի.ցույց են տալիս անձ, իր, երևույթ, հատկանիշ, գործողություն և այլն, ինչպես նաև, գիտեն այն, որ բառը կազմող հնչյունները կամ տառերն ունենում են որոշակի հաջորդականություն:Այս ամենը լավ գիտակցելով՝ երեխաները հանգում են բառի սահմանմանը՝ բառը հնչյունների այն միացությունն է, որն իմաստ է արտահայտում: Քիչ առ քիչ գիտելիքներ են ձեռք բերում բառակազմությունից՝ տարբերակում են արմատ, ածանց հասկացությունները: Ի դեպ, բառակազմության ուղղությամբ գործնական ունակությունների ձևավորումը նպատում է նաև ուղղագրական կարողությունների մշակմանն ու դրանց հմտությունների վերածմանը: Ուսումնասիրում ենք պարզ, բարդ և ածանցավոր բառերը, գաղափար կազմում նաև հոդակապի մասին, իսկ դրանց վերաբերյալ գիտելիքները հիմնավոր դարձնելու համար կատարում ենք մարզողական, ամրակայող և տարաբնույթ այլ վարժություններ: Երեխաները գաղափար են կազմում նաև բառերի քերականական իմաստի մասին:

Դեռևս գրաճանաչության նախապրբենական շրջանում երեխաները թե՛ տարրական պատկերացում են կազմում նախադասության մասին, թե՛ կարողանում են կազմել պարզ նախադասություններ, գծել այդ նախադասությունների գծապատկերները: Ինչպես լեզվական մյուս իրողությունների պարագայում, այնպես էլ նախադասության ուսուցանման դեպքում նախնական փուլում սահմանում կամ կանոն չենք տալիս: <<Նախադասություն>> թեմայի ուսումնասիրությունն արդյունավետ է դառնում, երբ երեխաները ձեռք են բերում խոսքում պատմողական, հարցական և հրամայական նախադասություններ օգտագործելու ունակություն, հետագայում իհարկե, նաև բացականչական նախադասություն[6, էջ 23]: Նախադասության ուսուցման տարրական փուլի ավարտին երեխաները իմանում են, որ՝

- Բառերով արտահայտված ամեն մի ամփոփ միտք կոչվում է նախադասություն,
- Նախադասության շեշտ ունեցող բառերը բարձր են արտասանվում, իսկ շեշտը դրվում է բառի վերջին ձայնավորի վրա,
- Հարցում արտահայտող նախադասություններում համապատասխան բառն արտասանվում է հարցական երանգով, իսկ վերջին ձայնավորի վրա դրվում է հարցական նշան:

Նախադասության մասին տրված գիտելիքները լիարժեք չեն լինի, եթե չանդրադառնանք նաև նախադասության գլխավոր և երկրորդական անդամներին, բազմակի անդամներին, պարզ և բարդ նախադասություններին, մեջբերվող խոսքին, կոչականին: Անշուշտ, այս շարահյուսական տեղեկությունները երեխաներին հաղորդում ենք ոչ այնքան սահմանումների, կանոնների ճանապարհով, որքան նրանց էական հատկանիշների դիտարկման, ճանաչման, խոսքում օգտագործման հնարավորությունների ընկալման և կիրառման տեսանկյունով:

Խոսել լեզվական տարրական գիտելիքների ուսուցման մասին և չանդրադառնալ ձևաբանական տարրական գիտելիքներին՝ անհնար է: Չնայած այն հանգամանքին, որ տարրական դասարաններում ծրագրային նյութը չի ներառում խոսքի մասերի ամբողջական ուսումնասիրություն: Սակայն բարձր դասարաններում համակարգված քերականության ուսումնասիրման համար անհրաժեշտ հիմք ստեղծելու նպատակով կրտսեր դպրոցականները զինվում են որոշակի ձևաբանական գիտելիքներով: Լեզվական տարրական գիտելիքների ուսուցման փուլում խոսքի մասերը ուսուցանում ենք ոչ այն հաջորդականությամբ, որն ընկած է քերականության ուսուցման համակարգված ու գիտական դասընթացների հիմքում, այլ՝

- գոյական,
- բայ,
- ածական,
- թվական,

Բայը /սկզբում՝ միայն գործողություն ցույց տվող բառեր անվանելով/ անմիջապես գոյականից հետո /առարկա ցույց տվող բառ անվանելով/ ուսուցանելը նպատակահարմար է թե՛ այն առումով, որ վեց-յոթ տարեկան երեխաները խոսքում գոյականից հետո ամենից շատ բայն են գործածում, թե՛ նրա համար, որ այս դեպքում հնարավորություն է ստացվում նախադասությունը դարձնել ուսուցման հիմնական գործոններից մեկը, քանի որ ընդամենը երկրորդ խոսքի մասն անցած լինելով՝ հնարավոր է դառնում նախադասություն ստանալ, իսկ հետո անցնելիք խոսքի մասերը գալիս-լրացնում են նախադասությունը: Ընդ որում խոսքի մասերն ուսուցանում ենք ոչ թե առանձին-առանձին, այլ՝ փոխկապակցված, դրանք միմյանց հետ համեմատելով, նմանություններ ու տարբերություններ գտնելով: Այսպիսի մոտեցման շնորհիվ բարենպաստ պայմաններ են ստեղծվում խոսքի մասերի հիմնական հատկանիշների ընկալման համար: Խառը բառախմբից հարցերի միջոցով առարկա, գործողություն, առարկայի հատկանիշ ցույց տվող բառերն առանձնացնելով՝ աշակերտները եզրահանգում և մեկընդմիշտ յուրացնում են , որ մեր խոսքում օգտագործվող բառերը ցույց են տալիս առարկա, գործողություն և առարկայի հատկանիշ, որ նրանցից յուրաքանչյուրն ունի իրեն տրվող որոշակի հարց, և բառերը խոսքում օգտագործելիս որոշակի փոփոխություններ են կրում: Ուսուցման հետագա փուլերում աշակերտներն աստիճանաբար ուսումնասիրում են խոսքի մասերն առանձին-առանձին՝ իբրև համակարգված քերականություն:

Գոյականի ուսուցումն այս փուլում իրականացվում է հետևյալ խնդիրների լուծումով՝

- Գոյական քերականական հասկացության ձևավորում,
- Հարցի օգնությամբ գոյականները տարբերելու,նաև անձ և իր ցույց տվող, կարողության տիրապետում,
- Հատուկ անունների ուղղագրության իմացության ձևավորում, ինչպես նաև իմացություն, որ միևնույն տեսակի բոլոր առարկաներին տրվող ընդհանուր անվանումը հասարակ անուն է, իսկ նույն տեսակի միայն մեկ առարկային տրվող առանձին անունը՝ հատուկ անուն,
- Հարցի օգնությամբ գոյականի թիվը որոշելու, փոփոխելու կարողությունների զարգացում /պետք է գոյականի թիվը տարբերեն թե՛ իմաստով, թե՛ վերջավորությամբ/ ,
- Բառապաշարի հարստացում նորանոր գոյականներով,
- Խոսքի մեջ գոյականները ճիշտ գործածելու կարողության ձևավորում, ըստ հոլովային նշանակության և համապատասխան վերջավորության:

Բայի ուսուցումն ավելի բարդ է, կապված նրա քերականական շատ հատկանիշների առկայության հետ: Ուսուցման առաջին փուլում՝

- ✓ Նախնական պատկերացում ենք ձևավորում բայի մասին՝ որպես առարկայի գործողություն ցույց տվող բառ,
- ✓ Հարցերի միջոցով դրանց տարբերակելու կարողություն ենք ձևավորում,
- ✓ Գրավոր և բանավոր խոսքում բայերը ճիշտ և գիտակցված գործածելու կարողությունն ենք զարգացնում,
- ✓ Մշակում ենք օժանդակ բայերը ճիշտ արտասանելու և գրելու ունակություն:

Բայի ուսուցման տարրական փուլում բավարարվում ենք այսքանով և նրանով,որ աշակերտները կարողանան որոշել թե ո՞ր բառն է առարկա ցույց տալիս և ո՞րը՝ նրա կատարած գործողությունը:

Ուսուցման այս փուլում գաղափար են կազմում բայի դեմքի մասին, իսկ հետագա քայլը կլինի բայերի փոփոխությունը թվով և ժամանակով:

Լեզվական գիտելիքների ուսուցման տարրական փուլում կարևորվում է հարցերի միջոցով ածականները, սկզբում՝ առարկայի հատկանիշ ասելով, որոշելու կարողության ձևավորումը: Տարբեր վարժություններ կատարելով՝ երեխաները համոզվում են, որ բառերը կարող են առարկայի հատկանիշները ներկայացնել ըստ գույնի, համի, ձևի, մեծության, նյութի և այլն: Գործնական վարժություններ կատարելով՝ երեխաները եզրահանգում են , որ ածականը թիվ, դեմք, ժամանակ չունի: Աշակերտների բառապաշարը ածականներով հարստացնելուն նպաստում են ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր ստեղծագործական շարադրությունները:

- ✓ Նախնական պատկերացում ենք ձևավորում բայի մասին՝ որպես առարկայի գործողություն ցույց տվող բառ,
- ✓ Հարցերի միջոցով դրանց տարբերակելու կարողություն ենք ձևավորում,
- ✓ Գրավոր և բանավոր խոսքում բայերը ճիշտ և գիտակցված գործածելու կարողությունն ենք զարգացնում,
- ✓ Մշակում ենք օժանդակ բայերը ճիշտ արտասանելու և գրելու ունակություն:

Բայի ուսուցման տարրական փուլում բավարարվում ենք այսքանով և նրանով,որ աշակերտները կարողանան որոշել թե ո՞ր բառն է առարկա ցույց տալիս և ո՞րը՝ նրա կատարած գործողությունը:

Ուսուցման այս փուլում գաղափար են կազմում բայի դեմքի մասին, իսկ հետագա քայլը կլինի բայերի փոփոխությունը թվով և ժամանակով:

Լեզվական գիտելիքների ուսուցման տարրական փուլում կարևորվում է հարցերի միջոցով ածականները, սկզբում՝ առարկայի հատկանիշ ասելով, որոշելու կարողության ձևավորումը: Տարբեր վարժություններ կատարելով՝ երեխաները համոզվում են, որ բառերը կարող են առարկայի հատկանիշները ներկայացնել ըստ գույնի, համի, ձևի, մեծության, նյութի և այլն: Գործնական վարժություններ կատարելով՝ երեխաները եզրահանգում են , որ ածականը թիվ, դեմք, ժամանակ չունի: Աշակերտների բառապաշարը ածականներով հարստացնելուն նպաստում են ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր ստեղծագործական շարադրությունները:

Ի տարբերություն նախորդ խոսքի մասերի, որոնց մասին աշակերտները նախնական գիտելիքներ ստանում են սկսած առաջին դասարանից, թվականն ավելի նոր է: Այն ուսուցանում ենք լեզվական կոնկրետ փաստերից դեպի դրանց ճանաչումը, գնահատումն ու ընդհանրացումը տանող ուղիով: Կոնկրետ օրինակներով երեխաներին բերում ենք այն եզրահանգման, որ թվականները ցույց են տալիս թիվ, քանակ, կարգ: Թվականը լինելով առարկայի հատկանիշ, այնուամենայնիվ մեծապես տարբերվում է մյուս հատկանիշ ցույց տվող խոսքի մասերից, քանի որ այն միայն առարկաների որոշակի քանակ է ցույց տալիս: Թիվ արտահայտելը թվականի իմաստային ամենաբնորոշ հատկանիշն է: Ածականի նման, այն ևս չի փոփոխվում դեմքով, թվով, ժամանակով: Թվականների դասակարգումն ըստ առանձին տեսակների իրականացնում ենք գործնական եղանակով՝ վարժություններ կատարելով: Ապա աշակերտները եզրակացնում են, որ

- ➢ Քանակական թվականները ցույց են տալիս առարկաների թիվը, քանակը և պատասխանում են քանի՞, որքա՞ն հարցերին,
- ➢ դասական թվականները ցույց են տալիս առարկաների հաջորդական կարգը, հերթականությունը և պատասխանում են ո՞րերորդ, քանի՞երորդ հարցերին:Սրանք կազմվում են քանակականներից՝ ավելացնելով –երորդ կամ –րորդ մասնիկները:

Թվականների ուսուցման ժամանակ մեծ ուշադրություն ենք դարձնում դրանց ուղղագրությանը, վարժությունների միջոցով աշխատանք է տարվում այդ ուղղությամբ: Դեռևս առաջին դասարանից երեխաները ձեռք են բերում տարրական գիտելիքներ, և գրավոր խոսքում հաճախ են օգտագործում թվականներ: Առանց խոսքի մասի անունը տալու, սովորողներն իմանում են, որ մեկից տասը թվերը գրվում են անջատ, տասնմեկից իննսունինը թվերը՝ միասին, իննսունիններից բարձր բոլոր թվերը գրվում են անջատ և այլն: Հաջորդ փուլում աշակերտները ծանոթանում են թվականների գրությանը՝ արաբական և հռոմեական թվանշաններով և այլն:

ՈՒսումնական աշխատանքը երկկողմ գործընթաց է՝ գիտելիքների հաղորդում և հաղորդվող գիտելիքների ընդունում, յուրացում: Այսինքն՝ ուսուցչի և աշակերտի աշխատանքը՝ դասավանդումն ու ուսումնառությունը, անբաժան, ամբողջական գործունեության երկու տարբեր, բայց փոխպայմանավորված կողմերն են:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ըստ ծրագրային պահանջների՝ մայրենի լեզվի դասընթացը երկու հիմնական մասերի ամբողջություն է: Դրանք են՝ ճանաչողական արժեք ունեցող գործնական, մատչելի քերականական գիտելիքները և ընթերցանության նյութերը: Լեզվական գիտելիքներն իրենց բնույթով ու շարադրանքով չունեն տեսական նպատակադրում, այլ՝ որոշակի ուղղվածություն, ճանաչողական-կիրառական արժեք: Փաստորեն մայրենիի դասի ընթացքում և դասի միջոցով երեխաները տեղեկություններ են ստանում լեզվական այս կամ այն երևույթի մասին և այդ առանձին տեղեկությունները համադրում, դարձնում է գիտելիքներ: Իսկ այդ գիտելիքները օգտագործում են բանավոր և գրավոր խոսքում:

Տարրական գիտելիքների ուսուցումը իրականացնում ենք վերլուծական-համադրական մեթոդով: Քերականական նյութն ընտրվում է ոչ թե նյութի բնույթից բխող գիտական համակարգով, այլ՝ հաշվի առնելով աշակերտների ընդունակությունները, նրանց լեզվական ու ընկալման հնարավորությունները, բառապաշարը, ուսուցվող նյութի գործնական արժեքը: Այն, ինչ երեխաներն արդեն գիտեն, պետք է նրանց մեջ դառնա գիտակցված գիտելիք, իսկ չգիտեցածը՝ ձեռք բերեն գործնական ճանապարհով:

Լեզվական տարրական գիտելիքների ուսուցումն սկսվում է նախադասությամբ, որից էլ առանձնացվում և ուսումնասիրվում են բառերը՝ որպես իմաստային և լեզվական միավորներ, քերականական հասկացություններ: Այսինքն, քերականության ուսուցումը սկիզբ է առնում կենդանի լեզվից, պարզ մտքերից և աստիճանաբար գնում դեպի բարդ նախադասությունները:

«Բառակազմություն» թեման ուսուցանվում է ավելի ուշ՝ գաղափար տալով բառի լեզվական բնորոշման, կազմության՝ պարզ, բարդ, ածանցավոր բառերի, արմատի, ածանցի, հոդակապի մասին: Այնուհետև ուսումնասիրվում են խոսքի մասերը՝ գոյականը, բայը, ածականը, թվականը՝ իրենց ամենահիմնական հատկանիշներով և գործածության ամենապարզ ձևերով:

Լեզվական գիտելիքներրի ուսուցանման փուլում լեզվական հասկացությունները չեն ուսումնասիրվում լեզվաբանական գիտական համակարգով, այլ՝ հիմք ընդունելով ուսուցման պարզից դեպի բարդը տանող սկզբունքները՝ գիտականորեն ճիշտ, բայց մատչելի մեկնաբանություններով:

Արդյունքում, ձեռք բերված լեզվական գիտելիքներն օգտագործվում են կապակցված խոսքում՝ գրավոր և բանավոր տեսակներով:

Լեզվական տարրական գիտելիքների ուսուցման փուլում կարևոր տեղ ենք հատկացնում լեզվական տարաբնույթ առաջադրանքներին ու խաղերին՝ աստիճանաբար նվազեցնելով ուսուցչական անմիջական մասնակցությունն այդ գործընթացին: Ավելի հաճախ պետք է կազմակերպվի ինքնաստուգումներ և

փոխստուգումներ: Երեխաներն ավելի ու ավելի հաճախ պիտի ինքնուրույն խոսք կառուցեն և նկատեն իրենց թույլ տված լեզվառճական սխալները, ինքնուրույնաբար շտկեն դրանք:

Ուսուցման գործընթացը տարրական դասարաններում կազմակերպելիս՝ երբեմն-երբեմն ստեղծում ենք խաղային իրավիճակներ, դրանով իսկ աշակերտներին հնարավորություն ընձեռելով մտնելու իրենց համար հիմնական, առաջատար գործունեության ոլորտ: Լեզվական դիդակտիկ խաղերը թե՛ գիտելիքների ընկալման, նոր փորձի ու տեղեկությունների հայթայթման միջոց են, թե՛ դրանց ամրապնդման ու ճշգրտման միջոց: Լեզվական խաղերը լրացնում են լեզվական վարժությունների համակարգը: Դրանք նպաստում են լեզվական գիտելիքների ձեռք բերման դժվարությունների հաղթահարմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աշոտ Տեր-Գրիգորյան, Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, «Լույս» հրատարակչություն, 1980թ., 564 էջ
2. Ջուլիետա Գյուլամիրյան, Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2006թ.
3. Նախաշավիղ, 2004թ., N 3-4
4. Նախաշավիղ, 2005թ., N 5-6
5. Նախաշավիղ, 2011թ., N 1
6. Նախաշավիղ, 2012թ., N 6